

րոս քահանայ» : Ասկէ աւելի բան մը չենք գիտեր իր ընտանեաց եւ պարագաներուն մասին :

Թորոս Տարօնեցիի առաջին անգամ կը հանդիպինք 1284-ին Մուշ ուր կը գրէ Վենետիկի Մխիթարեանց թիւ 193 Նոր Կտակարանը, թղթեայ, բոլորազիր (որուն համար ցուցակազիր Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան կը գրէ «հնածեւ, նուրբ եւ ընտիր») : Ահա եւ յիշատակարանը :

«Փառք ամենասուրբ երրորդութեանն ի բարձունս հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, որ ետ զաւրութիւն տկարութեանս իմոյ՝ հասանել ի վերջին գիծ գրոյ սուրբ առաքելոյս : Ծնորհուն Աստուծոյ սկսա եւ ողորմութեամբ նորա կատարեցի զաստուածայրմար պատգամս սուրբ առաքելոյն Պաւղոսի՝ բազում ջանիւք եւ մեծաւ փափաքանաւք՝ արի եւ երջանիկ միայնակեցի Նորոգէսի, աւգնականութիւն հասեալ յաստուծոյ եւ աղաւթիւք սուրբ առաքելոյն Պաւղոսի ստացաւ գսուրբ առաքեալս ի հալալ աշխատանաց իւրոց, զոր տէր յիսուս վայելե(ա)լ տացէ : Գրեցաւ լուսաւոր (յաջորդ բառը քերուած) եւ սուրբ պատուիրանս այս ի քաղաքն Մուշ, ի թուականութեան հայոց 217 (1284) ի Հայրապետութեան տեսուն Յակոբա (1), եւ յաշխարհակալութեան Արղուքայու Ղանին, զոր յայսմ ամի. եսպան զամբարշտեալ գոռոզն զսուլտան Ահմատն զհաւրեղբայր իւր (2), որ զոռոզացեալ հպարտացեալ ի վերայ եկեղեցեաց եւ քրիստոնէից մերձ յընկղմել, զոր տէր յիսուս ընկղմեաց զնա իւրաւքն հանդերձ, եւ բարձրացուց զԱրղուքայուն, զոր տէր յիսուս հաստատուն պահեսցէ զսա համարէն քրիստոնէից : Եւ շարագրեցաւ յընտիր աւրինակէ՝ ձեռամբ մեղապարտ գրչի Թորոսի : Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քրիստոսասէր սուրբ հա(յ)րք եւ հայրապետք եւ սրբասէր քահանայք, որ կարգայք եւ լուսաւորիք կամ աւրինակէք, թողութիւն հայցեցէք Նորոգիսի մի-

1) Յակոբ Ա. կամ Կլայեցի, 1268-1286 :

2) Սուլթան Ահմէտ Թախուտար Օղլու, 1281-1284, եղբայրը Ապաղա Ղանի որ թէեւ պղտիկութեան Քրիստոնեայ մկրտուած էր Նիկիոզոս անուանուելով, սակայն երբ զահ բարձրացաւ մահմետական եղաւ : 1284-ին Արղուքայու կամ Արղուն Ղան զայն սպաննեց և անոր տեղ զահակալեց մինչեւ 1291 : Արղու որդին էր Ապաղայի :